

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 07
Վիճակագրության պետական խորհրդի նիստի

21.05.2003թ.

ժ. 11

Մասնակցում էին՝

Ս. Մնացականյան (*խորհրդի նախագահ*), Գ. Անանյան, Գ. Գևորգյան, Վ. Դանիելյան, Վ. Դավթյան, Յու. Պողոսյան, Հ. Պետրոսյան (*խորհրդի անդամներ*), Ա. Աղազարյան (*խորհրդի քարտուղար*)

Հրավիրված էին՝

Ա. Միմոնյան (*ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ*), Ջ. Միրզոյան (*ՀՀ ԱՎԾ նախագահի գլխավոր խորհրդական*), Գ. Գյուրջյան (*Վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ*), Վ. Սարոյան (*Իրավաբանական բաժնի պետ*), Կ. Կույունջյան (*Մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ*), Ա. Սաֆյան (*Միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ*)

Օրակարգի նախագծում` ութ հարց.

1. «Բնակչության բնական շարժի հաշվառման կարգ»-ը հաստատելու մասին.
/Չեկուցող՝ Կ. Կույունջյան/
2. «Բնակչության միգրացիայի հաշվառման կարգ»-ը հաստատելու մասին.
/Չեկուցող՝ Կ. Կույունջյան/
3. «Հաշմանդամների կենսապայմանների հետազոտություն» հարցաթերթը հաստատելու մասին.
4. «Տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կազմակերպության տնօրենին» հարցաթերթը հաստատելու մասին.
5. «Տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կազմակերպության խնամյալին» հարցաթերթը հաստատելու մասին.
6. «Մանկական խնամատարական կազմակերպության տնօրենին» հարցաթերթը հաստատելու մասին.
7. «Մանկական խնամատարական կազմակերպության խնամյալին» հարցաթերթը հաստատելու մասին.
/Չեկուցող՝ Ն. Բաղդասարյան/
8. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվության վերաբերյալ.
8.1 Հաշվետվություն 2002թ. հոկտեմբերի 1-ից մինչև 2003թ. մարտի 23-ը ճապոնիա կատարած այցելության վերաբերյալ.
/Ներկայացնող՝ Հ. Պետրոսյան/

Նիստի օրակարգի նախագծի քննարկման ժամանակ ՀՀ ՎՊԽ անդամ Յու. Պողոսյանի կողմից առաջարկվեց նախագծից հանել թիվ 3, 4, 5, 6, 7 հարցերը` այդ հարցաթերթերում խմբագրական փոփոխություններ կատարելու անհրաժեշտությամբ պայմանավորված: Առաջարկությունն ընդունվեց և ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից 3 հարցով ներկայացված խորհրդի նիստի օրակարգի նախագիծը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

/Բնակչության արդյունքները- կողմ՝7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Օրակարգի նախագծում` երեք հարց.

1. «Բնակչության բնական շարժի հաշվառման կարգ»-ը հաստատելու մասին.
/Չեկուցող՝ Կ. Կույունջյան/
2. «Բնակչության միգրացիայի հաշվառման կարգ»-ը հաստատելու մասին.

/Զեկուցող՝ Կ. Կույումջյան/

3. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվության վերաբերյալ.

3.1 Հաշվետվություն 2002թ. հոկտեմբերի 1-ից մինչև 2003թ. մարտի 23-ը ճապոնիա կատարած այցելության վերաբերյալ.

/Ներկայացնող՝ Հ. Պետրոսյան/

Լսեցին՝

1. «Բնակչության բնական շարժի հաշվառման կարգ»-ը հաստատելու մասին.

/Զեկուցող՝ Կ. Կույումջյան/

Նշվեց, որ ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի կողմից բնակչության բնական շարժի հաշվառման կարգը, մեխանիզմները, մեթոդաբանությունն առայսօր որևէ փաստաթղթով կանոնակարգված չի եղել և հիմնականում առաջնորդվել են տարիների ընթացքում ձևավորված ավանդույթներով: Հաշվի առնելով ոլորտում իրականացվող աշխատանքների նորմատիվ ակտով կարգավորման անհրաժեշտությունը, ՀՀ ՎՊԽ հաստատմանն է ներկայացվել վերոնշյալ կարգը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաստատել Բնակչության բնական շարժի հաշվառման կարգը համաձայն հավելված 1-ի :

/Անհատական/

/Քվեարկության արդյունքները - կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

2. «Բնակչության միգրացիայի հաշվառման կարգ»-ը հաստատելու մասին.

/Զեկուցող՝ Կ. Կույումջյան/

Նշվեց, որ ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի կողմից բնակչության միգրացիայի հաշվառման կարգը, մեխանիզմները, մեթոդաբանությունն առայսօր որևէ փաստաթղթով կանոնակարգված չի եղել և հիմնականում առաջնորդվել են տարիների ընթացքում ձևավորված ավանդույթներով: Հաշվի առնելով ոլորտում իրականացվող աշխատանքների նորմատիվ ակտով կարգավորման անհրաժեշտությունը, ՀՀ ՎՊԽ հաստատմանն է ներկայացվել վերոնշյալ կարգը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաստատել Բնակչության միգրացիայի հաշվառման կարգը՝ համաձայն հավելված 1-ի:

/Անհատական/

/Քվեարկության արդյունքները - կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

3. Այլ հարցեր. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

3.1 Հաշվետվություն 2002թ. հոկտեմբերի 1-ից մինչև 2003թ. մարտի 23-ը ճապոնիա կատարած այցելության վերաբերյալ.

/Ներկայացնող՝ Հ. Պետրոսյան/

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաշվետվության վերաբերյալ հաղորդումն ընդունել ի գիտություն:

/Արձանագրային/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Նախագահ

Ս. Մնացականյան

Քարտուղար

Ա. Աղազարյան